ՆՈՐ ԳՐՔԵՐ

«ЛИТЕРАТУРНОЕ НАСЛЕДСТВО П. АЛ. СПЕНДИАРОВ — ПИСЬМА». Издание АН АрмССР, 1962 год, тираж 1000 экз. 545 стр., цена 2 р. 68 к.

Հայ տաղանդավոր կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի նամակները հրապարակվում են առաջին անգամ։

Ներկա ժողովածուն կազմված է երկու մասից՝ «Ալ. Սպենդիարյանի նամակները» և «Նամակներ Ալ. Սպենդիարյանին»։ Ժողովածուում տեղ են գտել այն նամակները, որոնք այս կամ այն չափով բնութագրում են անվանի կոմպոզիտորի երաժշտական-հասարակական գործունեությունը։

Սպենդիարյանի նամականին ընթերցողներին ծանոթացնում է ստեղծագործական-գաղափարական այն կապերի հետ, որ նա ունեցել է ինչպես հայ, այնպես էլ ռուս երաժշտական կուլտուրայի նշանավոր գործիչների հետ։

Ժողովածուում ընդգրկված նամակները լույս են սփռում մեծատաղանդ երաժշտագետի էսթետիկական հայացքների վրա, բնութագրում նրան որպես գեղագետ-քաղաքացու և խոշոր երաժշտական-հասարակական գործչի, ցույց են տալիս նրա գաղափարախոսության դեմոկրատիզմը։

Ժողովածուն կազմել է, առաջաբանն ու ծանոթագրությունները գրել է Կ. Գրիգորյանը։

Հ. ԽՏՐՅԱՆ — «Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը», *Հայպետհրատ, 1962, տպաքանակը 2000 օրինակ, 70 էջ, գինը 6 կոպ.։*

«ՈՒՂԵՑՈՒՅՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ», *Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1962, տպաքանակը 1000 օրինակ, 186 էջ, գինը 56 կ.,* կազմեց ԳՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆԸ։

Գրականության և արվեստի թանգարանի գրական բաժնի արխիվային ֆոնդերի ուղեցույցն ընդգրկում է թանգարանում կենտրոնացված՝ հիմնականում 19—20-րդ դարերի հայ գրողների ու մշակութային գործիչների, ինչպես և հիմնարկ-ձեռնարկությունների, խմբագրությունների, ուսումնական հաստատությունների 200-ից ավելի արխիվային ֆոնդերի համառոտ նկարագիրը։

Ներկա ուղեցույցը ընդգրկում է Գրականության և արվեստի թանգարանի միայն գրական բաժնի նյութերը։

«Ուղեցույցում» ֆոնդերի բնութագրումները կազմված են երեք հիմնական մասերից.

ա) Ֆոնդերի անվանումը և համարը, պահպանման միավորների քանակը, ընդգրկման թվականները։

բ) Համառոտ կենսագրական տեղեկանք ֆոնդի տիրոջ մասին։

գ) Ֆոնդերի բովանդակության նկարագրություններ։

«Ուղեցույցն» ունի հետևյալ երեք հիմնական բաժինները.

1. Անհատական ֆոնդեր, 2. Հիմնարկ-ձեռնարկությունների, ուսումնական հաստատությունների և խմբագրությունների ֆոնդեր, 3. Հավաքածուներ։

Ուղեցույցի նպատակն է ընդհանուր գաղափար տալ տասնամյակների ընթացքում թանգարանում կենտրոնացված ֆոնդերի, ծավալի, բնույթի և արժեքի մասին, ըստ ամենայնի դյուրացնել դրանց օգտագործումը։

ՆՈՐ ԳՐՔԵՐ

«КРАТКАЯ ЛИТЕРАТУРНАЯ ЭНЦИКЛОПЕДИЯ», том I. Гос. научное издательство «Советская энциклопедия», Москва, 1962 г. Тираж 100.000 экз., 1087 стр., цена 3 р. 20 к.

Հրապարակի վրա գտնվող ներկա հանրագիտարանը նախատեսված է գրականությամբ հետաքրքրվող ընթերցող լայն հասարակայնության համար։ Այն կոչվում է համառոտ, որովհետև այնտեղ սպառված չեն գրականագիտությանը վերաբերող բոլոր գիտելիքներն ու հարցերը։

Հանրագիտարանում սեղմ, սակայն անհրաժեշտ չափով լուսաբանված են գրական ամենակարևոր հարցերը, տրված են ամենատարբեր երկրների նշանավոր գրողների կենսագրությունները ու նրանց գրական ստեղծագործությունների ընդհանուր բնութագրումները։ Հատորում զետեղված ակնարկային հոդվածներում ներկայացված են աշխարհի ամենատարբեր ժողովուրդների գեղարվեստական գրականության զարգացման պատմությունները՝ ընդհանուր գծերով։

Հանրագիտարանի խմբագրությունը նպատակ է դրել հնարավորության սահմաններում լիարժեք ձևով ներկայացնել համաշխարհային գրականության զարգացման պրոցեսը։ Այս բոլորին առընթեր հանրագիտարանում տեղ են գտել մի շարք հոդվածներ, որոնք լուսաբանում են գրականության տեսության ու էսթետիկայի մի շարք կարևորագույն հարցեր։

Խմբագրությունը հենվելով գրականագիտության մարքս-լենինյան գիտության նվաճումների վրա, անհրաժեշտ է գտել ընթերցողներին ծանոթացնել ոչ միայն այն ժողովուրդների գրականությունների հետ, որոնք ունեն անցյալի խիստ տրադիցիաներ ու լավ ուսումնասիրված են (Եվրոպա, ԱՄՆ), այլև նրանց հետ, որոնք առավել կամ նվազ չափով չեն լուսաբանվել մեր գրականագիտության մեջ (Աֆրիկա)։

Ներկա բազմահատոր հանրագիտարանում տեղ կգտնեն շուրջ 12.000 հոդվածներ, որոնք կլուսաբանեն աշխարհի ամենատարբեր երկրների գրականության հարցերը, սկսած ամենահին ժամանակներից մինչև մեր օրերը։

Հանրագիտարանի ներկա առաջին հատորը հիմնականում ընդգրկում է A, Ъ, B տառերը։ Տավալուն հոդվածներ են նվիրված հայոց լեզվին (Կուսիկյան), ժողովրդական բանահյուսությանը (Ա. Ղանալանյան), հայ հին շրջանի գրականությանը (Մ. Մկրյան), հայ նոր գրականությանը (Ա. Ինճիկյան), սովետահայ գրականությանը (Ս. Ազարաբյան)։

Հատորում զետեղված են համառոտ տեղեկություններ Ղ. Աղայանի, Ավ. Արասխանյանի, Արազու, Ա. Բակունցի և շատ ուրիշների մասին։